## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

N 37

«10» փետրվարի 2020 թվականի

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 5-ին կայացած թիվ 1 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 9 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

10.02.2020թ. գ. Հացիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» փետրվարի 2020թվականի N 1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 05-Ի ԹԻՎ 1 ՀԵԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 05-ի թիվ1 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

1. Ավոյան Արգամ
2. Արշակյան Համլետ
3. Թովմասյան Ռոբերտ
4. Իսկանդարյան Ջիվան
5. Կարապետյան Սերգո
6. Մարտիրոսյան Պերճ
7. Սարգսյան Ստեփան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

05.02.2020թ.
գյուղ Հացիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Արմավիրի մարզի Հացիկ
համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 05-ի
թիվ1 որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 2020 թվականի թիվ1 հերթական նիստի

1. Օրակարգի հաստատման մասին:
   /զեկ. Կ. Պողոսյան/
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 2020 թվականի հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:
   /զեկ. Ա.Եղիազարյան/
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման մասին:
   /զեկ. Կ. Պողոսյան/
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 2020 թվականի սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:
   /զեկ. Ա.Եղիազարյան/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«05» փետրվարի 2020թվականի N 2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հացիկ համայնքի ավագանու 2020 թվականի հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

1. Ավոյան Արգամ
2. Արշակյան Համլետ
3. Թովմասյան Ռոբերտ
4. Իսկանդարյան Ջիվան
5. Կարապետյան Սերգո
6. Մարտիրոսյան Պերճ
7. Սարգսյան Ստեփան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

05.02.2020թ.
գյուղ Հացիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Արմավիրի մարզի Հացիկ
համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 05-ի
թիվ2 որոշման

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հացիկ համայնքի ավագանու
2020 թվականի հերթական նիստերի անցկացման

| | |
|---|---|
| 1-ին նիստ | 05.02.2020թ. |
| 2-րդ նիստ | 06.04.2020թ. |
| 3-րդ նիստ | 05.06.2020թ. |
| 4-րդ նիստ | 05.08.2020թ. |
| 5-րդ նիստ | 05.10.2020թ. |
| 6-րդ նիստ | 07.12.2020թ. |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» փետրվարի 2020թվականի N 3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հացիկ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: :

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

1. Ավոյան Արգամ
2. Արշակյան Համլետ
3. Թովմասյան Ռոբերտ
4. Իսկանդարյան Զիվան
5. Կարապետյան Սերգո
6. Մարտիրոսյան Պերճ
7. Սարգսյան Ստեփան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

05.02.2020թ.
գյուղ Հացիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Արմավիրի մարզի Հացիկ
համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 05-ի
թիվ3 որոշման

# Հաշվետվություն

## ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 2019թվականի տարեկան բյուջեի կատարման

| Եկամուտներ | պլան /հազար դրամ/ | կատարված /հազար դրամ/ | |
|---|---|---|---|
| վարչական բյուջե | | | |
| 1.հողի հարկ | 16200.0 | 12660.3 | 78.2% |
| 2.գույքահարկ փոխադրամիջ. | 6850.0 | 7144.0 | 104.3 % |
| 3.գույքահարկ շենք. շին. | 170.0 | 95.1 | 55.3% |
| 4.տեղական տուրքեր | 250.0 | 361.0 | 144.4% |
| 5.հողի վարձավճար | 1765.0 | 1814.3 | 102.8% |
| 6.տեղական վճարներ | 670.0 | 240.0 | 35.8% |
| 7.պաշտոնական տրասֆերտներ | 30866.0 | 30866.0 | 100 % |
| որից պետ.բյուջեից դոտացիա | 29699.1 | 29699.1 | 100.0% |
| սուբվենցիա | 1166.9 | 1166.9 | 100.0% |
| 8. Կապիտալ սուբվենցիա | 3132,0 | 3132,0 | 100.0% |
| հողի օտարումից մուտքեր | 684,4 | 779,3 | 113.9% |
| տարեսկզբի ազատ մնացորդ | 9593.6 | 9593.6 | |
| վարչական բյուջեի պ/ֆ հատկ ֆ/բ | 1210.0 | 1080.0 | |
| Ընդամենը եկամուտներ` | **70181.0** | **66685.7** | **94.%** |

| Ծախսեր | նախատեսված /հազար դրամ/ | կատարված /հազար դրամ/ | |
|---|---|---|---|
| վարչական բյուջե | | | |
| տեղական ինքնակառավարում | 19210.0 | 18300.3 | 95.2% |
| համայնքային այլ ծառայություններ | 2410.0 | 2097.6 | 87.0% |
| սոցապահովագր. և ապահով. | 842.0 | 689.7 | 81.9% |
| մշակույթ, կրոն, սպորտ | 2620.0 | 2225.2 | 84.9% |
| կրթություն | 3086.9 | 2986.9 | 96.8% |
| ներհամայնքային.ճան.նորոգում | 1934.0 | 1934.0 | 100% |
| սան. մաքրում | 2391.0 | 2364.0 | 98.9% |
| փողոցների լուսավորում | 2050,0 | 1863.1 | 90.9% |
| ջրամատակարարում | 9120,0 | 8807.3 | 88.5% |
| ոռոգում | 8515.0 | 4258.0 | |
| անասնաբուժ. Ծառայություն | 680.0 | 672,0 | |
| այլ ծախսեր | 1200.0 | | |
| պահուստային ֆոնդ | 2712.1 | 1080,0 | |
| ընդամենը | **56771.0** | **47278,1** | **83.2%** |
| ֆոնդային բյուջե | | | |
| սարքեր սարքավորումներ | 2000.0 | 1940.0 | 97.0% |
| նախագծային աշխատանքներ | 1200.0 | 1160.0 | 96.7% |
| ՀԾ ծրագրի ձեռք բերում | 300.0 | 298.0 | 99.3% |
| կապ. նորոգումների ծախսեր | 11120.0 | 11003.0 | 98.9% |
| ընդամենը | **14620.0** | **14401.0** | **98.5%** |
| ընդամենը ծախսեր | 70181.0 | 60599,1 | 86,3% |

2019թվականի տարեվերջի ազատ մնացորդը կազմում է 6086.6 հազար դրամ, որից 5902.8 հազար դրամը վարչական բյուջեի ազատ մնացորդն է, և 183,8 հազար դրամը ֆոնդային բյուջեի ազաը մնացորդն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«05» փետրվարի 2020թվականի N 4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 2020 թվականի սանիտարական մաքրման սխեման համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

1. Ավոյան Արգամ
2. Արշակյան Համլետ
3. Թովմասյան Ռոբերտ
4. Իսկանդարյան Ջիվան
5. Կարապետյան Սերգո
6. Մարտիրոսյան Պերճ
7. Սարգսյան Ստեփան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

05.02.2020թ.
գյուղ Հացիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Արմավիրի մարզի Հացիկ
համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 05-ի
թիվ4 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ

1. Հացիկ համայնքում առկա է 576 տնտեսություն, բնակչության թիվը 2790 մարդ, աղբահանվող փողոցների թիվը 12, երկարությունը՝ 15 կիլոմետր:
2. Համայնքում առաջացող կենցաղային աղբի ծավալը մոտավոր հաշվարկներով կազմում է 780 խորանարդ մետր:
3. Սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 70 հեկտար:

Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում են համայնքի ամբողջ տարածքում կիրակի օրերի ընթացքում՝ համայնքապետարանի կողմից: Աշխատանքները կատարում է համայնքի բնակիչ Սարգիս Խամիսյանն իրեն ամրագրված տրակտորով, համայնքապետարանի կողմից տրամադրվող դիզելային վառելիքով՝ համաձայն կնքված պայմանագրի:

4. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարի դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 36-Ն որոշմամբ, որի համաձայն.

   1/ ըստ հասցեի հաշվառում ունեցող և առանց հաշվառման /փաստացի/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար սահմանվում է ամսական վչար 50 ՀՀ դրամ,

   2/առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների մեկ քառակուսի մետր տարածքի համար սահմանվում է ամսական վճար՝ 50 ՀՀ դրամ.

   3/արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մեկ քառակուսի մետր տարածքի համար սահմանվում է ամսական վճար՝ 5 ՀՀ դրամ.

   4/ կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է ամսական վճար՝ 3 ՀՀ դրամ:
5. Համայնքի տարածքից աղբի հավաքման, փոխադրման, տեղափոխման, վնասազերծման, ինչպես նաև աղբ տեղափոխող տրակտորի պահպանման աշխատանքները համակարգվում է համայնքապետարանի կողմից:
6. Համայնքի սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տարածք չկա:
7. Համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվելու են համայնքի 2020 թվականի բյուջեից 2 470 000 ՀՀ դրամով:
8. Համայնքի բյուջեի վարչական մասում 2020թվականի համար նախատեսվել է հավաքագրել աղբահանության վճար 450 000 ՀՀ դրամ: